

տնօրեն՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյան  
հեռ. : (374 10) 517 128  
հեռատիպ՝ (374 10) 517 301  
Էլ-փոստ՝ [holysee@etchmiadzin.am](mailto:holysee@etchmiadzin.am)  
կայք՝ [www.armenianchurch.org](http://www.armenianchurch.org)

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### **Ղրիմի Սբ. Խաչ եկեղեցին կշարունակի մնալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ուկրաինայի Հայոց թեմի իշխանության ներքո**

Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն Ռադայի նախագահ Անատոլի Գրիցենկոն, ի պատասխան Ղրիմի Սբ. Խաչ եկեղեցու առնչությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հղած գրության, հեռախոսազրույց է ունեցել Նորին Սրբության հետ: Գերագույն Ռադայի նախագահը հավաստիացրել է Վեհափառ Հայրապետին, որ Ղրիմի Սբ. Խաչ եկեղեցու կարգավիճակում որևէ փոփոխություն չի լինելու: Սբ. Խաչ եկեղեցին շարունակելու է գտնվել Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու Ուկրաինայի Հայոց թեմի իշխանության ներքո՝ որպես հոգևոր-եկեղեցական նշանակության կառույց:

Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Ուկրաինայի հայոց թեմում արդեն իսկ հոգևոր սպասավորության է կոչվել Տ. Հայրիկ արեղա Հովհաննիսյանը, ով թեմակալ առաջնորդի իշխանության ներքո իր ծառայությունն է բերելու իբրև Ղրիմի առաջնորդական փոխանորդ և Սբ. Խաչ վանքի վանահայր: